

▶B

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ և ԽՈՐՀՐԴԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի 2004/35/ԵՀ
ՀՐԱՀԱՆԳ

Շրջակա միջավայրին հասցված վնասը կանխարգելելու և վերացնելու մասով
բնապահպանական պատասխանատվության մասին

(ՊՏ L 143, 30.04.2004թ., էջ 56)

Փոփոխված՝

Պաշտոնական տեղեկագիր

		թիվ	էջ	ամսաթիվ
<u>▶M1</u>	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի մարտի 15-ի 2006/21/ԵՀ հրահանգով	L 102	15	11.04.2006թ.
<u>▼M2</u>	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի ապրիլի 23-ի 2009/31/ԵՀ հրահանգով (Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)	L 140	114	5.06.2009թ.

▼B

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2004 թվականի ապրիլի 21-ի 2004/35/ԵՀ
ՀՐԱՀԱՆԳ**

**Շրջակա միջավայրին հասցված վնասը կանխարգելելու և վերացնելու մասով
բնապահպանական պատասխանատվության մասին**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,
հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և,
մասնավորապես, դրա 175(1) հոդվածը,
հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը ⁽¹⁾,
հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի
եզրակացությունը⁽²⁾,
Տարածաշրջանների կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,
գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն և ելնելով
Հաշտեցման կոմիտեի կողմից 2004 թվականի մարտի 10-ին հաստատված համատեղ
տեքստից,
Քանի որ

1) ներկայումս Համայնքում կան առողջությանը էական վնաս հասցնող շատ աղտոտված տարածքներ և վերջին տասնամյակներում կենսաբազմազանությունն էական կորուստներ է կրել: Եթե գործողություններ չնախաձեռնվեն, այն կարող է հետագայում ավելացնել տարածքների աղտոտումը և կենսաբազմազանության կորուստները: Ինչքան հնարավոր է, շրջակա միջավայրին հասցված վնասի կանխարգելումը և վերացումը նպաստում է Համայնքի՝ շրջակա միջավայրի քաղաքականության նպատակների և սկզբունքների իրականացմանը, ինչպես սահմանված է Պայմանագրում: Երբ որոշում է ընդունվում վնասը վերացնելու եղանակների մասին, պետք է հաշվի առնվեն տեղի առանձնահատկությունները,

2) շրջակա միջավայրին հասցված վնասը կանխարգելելը և վերացնելը պետք է

իրականացվի «ադոտոդը վճարում է» սկզբունքի համաձայն, ինչպես նշված է Պայմանագրում՝ կայուն զարգացման սկզբունքի համաձայն: ուստի, սույն Հրահանգի հիմնական սկզբունքը պետք է լինի այն, որ այն օպերատորները որոնց գործունեության հետևանքով շրջակա միջավայրին վնաս է հասցվել կամ գոյություն ունի նման վնասի անմիջական վտանգ, պետք է ֆինանսական պատասխանատվության ենթարկվեն, որն էլ օպերատորներին կշահագրգռի միջոցներ ձեռնարկել և այնպիսի գործունեություն իրականացնել, որը նվազագույնի կհասցնի շրջակա միջավայրին հասցվող վնասը, այնպես, որ վերջիններս ենթարկվեն ավելի քիչ ֆինանսական պատասխանատվության,

3) քանի որ սույն Հրահանգի նպատակը, այն է՝ ստեղծել ընդհանուր շրջանակ՝ շրջակա միջավայրին հասցվող վնասների կանխարգելման և վնասը վերացնելու համար՝ հասարակության համար ընդունելի գնով, հնարավոր չէ ձեռք բերել անդամ պետությունների ուժերով և, ուստի, ավելի լավ կիրականացվի Համայնքի մակարդակով սույն Հրահանգի մասշտաբների և Համայնքի մակարդակով այլ օրենսդրության վրա ազդեցությունների նկատառումներով, (մասնավորապես, «Վայրի թռչունների պահպանության մասին» Խորհրդի 1979 թվականի ապրիլի 2-ի 79/409/ԵՏՀ հրահանգ(4), «Բնական միջավայրի և վայրի ֆլորայի ու ֆաունայի պահպանության մասին» Խորհրդի 1992 թվականի մայիսի 21-ի 92/43/ԵՏՀ հրահանգ (5), Ջրային քաղաքականության ոլորտում Համայնքի գործողությունների շրջանակ հաստատող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2000 թվականի հոկտեմբերի 23-ի 2000/60/ԵՀ հրահանգ (6)), Համայնքը կարող է, սուբսիդիարության սկզբունքի համաձայն, միջոցներ ընդունել, ինչպես սահմանված է Պայմանագրի 5-րդ հոդվածում: Այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքին համապատասխան՝ սույն Հրահանգը չի նախատեսում ավելին, քան անհրաժեշտ է՝ նշված նպատակին հասնելու համար,

4) շրջակա միջավայրին հասցվող վնասը նաև ներառում է օդի միջոցով տարածվող մասնիկների կողմից առաջ եկած վնասը, քանի որ դրանք վնասում են ջրին, հողին կամ պահպանվող տեսակներին, կամ բնական միջավայրին,

5) սույն Հրահանգով սահմանված համակարգի ճիշտ մեկնաբանման և կիրառության համար օգտակար հասկացությունները պետք է սահմանվեն, մասնավորապես, շրջակա

միջավայրին հասցվող վնասի սահմանման մասով: Եթե տվյալ հասկացությունը վերցված է Համայնքի՝ համապատասխան այլ օրենսդրությունից, պետք է կիրառվի նույն սահմանումն այնպես, որ հնարավոր լինի կիրառել ընդհանուր չափորոշիչներ և խթանել միասնական կիրառությունը,

6) պահպանվող տեսակները և բնական միջավայրը կարելի է նաև սահմանել՝ հղում կատարելով այն տեսակներին և բնական միջավայրին, որոնք պահպանվում են՝ բնության պահպանությանը վերաբերող ազգային օրենսդրության համաձայն: Այնուամենայնիվ, հաշվի պետք է առնվեն հատուկ իրավիճակները, երբ շրջակա միջավայրի պաշտպանության ընդունելի մակարդակի վերաբերյալ Համայնքի կամ համարժեք ազգային օրենսդրությամբ.

7) հողին հասցված վնասի գնահատման նպատակով թույլ են տրվում որոշակի շեղումներ, ինչպես սահմանված է սույն Հրահանգում, ցանկալի է կիրառել ռիսկի գնահատման ընթացակարգեր, որոնց նպատակը մարդու առողջությանը հասցված բացասական ազդեցության հավանականությունը սահմանելն է,

8) սույն Հրահանգը շրջակա միջավայրին հասցվող վնասի մասով պետք է կիրառվի մասնագիտական այն գործունեության նկատմամբ, որը մարդու առողջության և շրջակա միջավայրի համար ռիսկի գործոն է պարունակում: Գործունեության այդ ձևերը պետք է սահմանվեն՝ սկզբունքորեն հղում կատարելով Համայնքի համապատասխան օրենսդրությանը, որը մարդու առողջության կամ շրջակա միջավայրի համար պոտենցիալ կամ իրական ռիսկ ընդգրկող որոշակի գործունեության կամ պրակտիկայի նկատմամբ կարգավորիչ պահանջներ է սահմանում,

9) սույն Հրահանգը պաշտպանվող տեսակներին և բնական միջավայրերին հասցվող վնասների առումով պետք է կիրառվի ցանկացած մասնագիտական գործունեության նկատմամբ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն սահմանված չէ Համայնքի օրենսդրությանը հղում կատարելու միջոցով՝ որպես մարդու առողջության կամ շրջակա միջավայրի համար պոտենցիալ կամ իրական ռիսկ ընդգրկող մասնագիտական

գործունեության ձև: Նման դեպքերում օպերատորի նկատմամբ պարտավորությունը սահմանվում է միայն սույն Հրահանգի համաձայն, այն դեպքերում, երբ վերջինս սխալմունք կամ անփութություն է թույլ տվել,

10) հստակորեն պետք է հաշվի առնվի Եվրատոմ Պայմանագիրը և համապատասխան միջազգային կոնվենցիաները, ինչպես նաև Համայնքի այն օրենսդրությունը, որն առավել համապարփակ և հստակորեն կարգավորում է սույն Հրահանգի գործողության ոլորտի ներքո գտնվող ցանկացած գործունեության իրականացում: Սույն Հրահանգը, որը իրավասու մարմինների լիազորությունները սահմանելիս չի նախատեսում լրացուցիչ կանոններ՝ իրավական նորմերի հակասությունների առումով, չի սահմանափակում դատարանների միջազգային իրավասության կանոնները, որոնք, մասնավորապես, սահմանված են «Քաղաքացիական և առևտրային հարցերով վճիռների իրավասության, ճանաչման և կիրարկման մասին» Խորհրդի 2000 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 44/2001 կանոնակարգով (ԵՀ) (7): Սույն Հրահանգը չպետք է կիրառվի գործունեության այն ձևերի նկատմամբ, որոնց հիմնական նպատակը պետական պաշտպանությանը և միջազգային անվտանգությանը ծառայելն է,

11) սույն Հրահանգը նպատակ ունի կանխարգելելու և վերացնելու շրջակա միջավայրին հասցվող վնասը և չի շոշափում ավանդական վնասի համար կատարվող փոխհատուցումների իրավունքները, որոնք տրամադրվում են քաղաքացիական պարտավորությունները կարգավորող համապատասխան միջազգային համաձայնագրերով,

12) շատ անդամ պետություններ միջազգային պայմանագրերի կողմ են, որոնք որոշակի բնագավառներում վերաբերում են քաղաքացիական պարտավորություններին: Այդ անդամ պետությունները պետք է կարողանան սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց հետո ևս շարունակել նման պայմանագրերի կողմ մնալ, իսկ այլ անդամ պետություններ չպետք է կորցնեն նման պայմանագրերի կողմ դառնալու ազատությունը,

13) շրջակա միջավայրին հասցված վնասներից ոչ բոլորն է հնարավոր վերացնել

պարտավորության մեխանիզմի միջոցով, Որպեսզի նման մեխանիզմը արդյունավետ լինի, պետք է գոյություն ունենան մեկ կամ մի քանի աղտոտողներ, որոնց հնարավոր է հայտնաբերել, վնասը պետք է լինի կոնկրետ ու քանակական առումով չափելի, և պատճառահետևանքային կապ պետք է հաստատվի վնասի ու հայտնաբերված աղտոտողի(ների) միջև: Ուստի, պարտավորությունը հարմար գործիք չէ լայն տարածում ունեցող, ցրված բնույթի աղտոտման դեպքում, երբ անհնար է շրջակա միջավայրի բացասական ազդեցությունները կապել որոշ անհատների կողմից գործելու կամ չգործելու հանգամանքի հետ,

14) սույն Հրահանգը չի կիրառվում անձին հասցված վնասի, մասնավոր սեփականությանը հասցված վնասի կամ որևէ այլ տնտեսական կորստի նկատմամբ և չի շոշափում այդ տիպի վնասներին վերաբերող իրավունքները,

15) քանի որ շրջակա միջավայրին հասցված վնասի կանխարգելումը և վերացումն ուղղակիորեն նպաստում են Համայնքի շրջակա միջավայրի քաղաքականության իրականացմանը, այդ պատճառով պետական մարմինները պետք է ապահովեն սույն Հրահանգով սահմանված համակարգի պատշաճ իրականացումն ու կիրարկումը,

16) շրջակա միջավայրի վերականգնումը պետք է իրականացվի արդյունավետ եղանակով՝ ապահովելով, որ ձեռք բերվեն վերականգնմանն առնչվող համապատասխան նպատակները: Այդ նպատակով պետք է սահմանվի ընդհանուր շրջանակ, որի պատշաճ կիրառությունը պետք է վերահսկվի իրավասու մարմնի կողմից,

17) համապատասխան դրույթ պետք է սահմանվի այն դեպքերի համար, երբ տեղի են ունեցել շրջակա միջավայրի հասցված վնասի մի քանի դեպքեր այնպես, որ իրավասու մարմինները չեն կարողանում ապահովել, որ միևնույն ժամանակ ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ ուղղիչ միջոցները : Նման դեպքում իրավասու մարմինը պետք է իրավունք ունենա որոշելու, թե շրջակա միջավայրին հասցված որ վնասները պետք է առաջինը կարգավորվեն,

18) «աղտոտողը վճարում է» սկզբունքի համաձայն՝ շրջակա միջավայրին վնաս հասցնող կամ նման վնասի անմիջական վտանգ ստեղծող օպերատորը պետք է սկզբունքորեն կրի կանխարգելիչ և վնասը վերացնող անհրաժեշտ միջոցների ծախսերը: Եթե իրավասու մարմինն ինքնուրույն կամ երրորդ կողմի միջոցով գործում է օպերատորի փոխարեն, այդ մարմինն ապահովում է, որ իր կողմից կատարված ծախսերը վճարվեն տվյալ օպերատորի կողմից: Անհրաժեշտ է նաև, որ օպերատորները վճարեն նաև շրջակա միջավայրին հասցված վնասի գնահատման ծախսերը կամ նման վնասի անմիջական վտանգի գնահատման ծախսերը,

19) անդամ պետությունները կարող են հաստատագրված դրույքաչափով հաշվարկ սահմանել՝ վճարման ենթակա վարչական, իրավական, կիրարկման և այլ ընդհանուր ծախսերի համար,

20) օպերատորից չպետք է պահանջվի կրել կանխարգելիչ և վնասը վերացնող այն ծախսերը, որոնք, սույն Հրահանգի համաձայն, կատարվել են այն իրավիճակներում, եթե տվյալ վնասը կամ դրա անմիջական վտանգը օպերատորի վերահսկման շրջանակից դուրս որոշակի դեպքերի արդյունք է: Անդամ պետություններն ապահովում են, որ այն օպերատորները, որոնք մեղավոր չեն կամ անփույթ չեն եղել, չկրեն վնասի վերացման միջոցների ծախսերն այնպիսի իրավիճակներում, երբ տվյալ վնասը տեղի է ունեցել արտանետման կամ հստակ թույլատրված դեպքերում, կամ եթե հնարավոր չի եղել իմանալ պոտենցիալ վնասի մասին այն ժամանակ, երբ դեպքը կամ արտանետումը տեղի է ունեցել,

21) օպերատորները պետք է կանխարգելիչ միջոցների հետ կապված ծախսերը կրեն, եթե այդ միջոցներն առանց այդ էլ պետք է իրականացվեին՝ պահպանելու համար իրենց գործունեությանը վերաբերող օրենսդրական, կարգավորիչ կամ վարչական դրույթները կամ որևէ թույլտվության կամ արտոնագրի պայմանները,

22) անդամ պետությունները կարող են սահմանել այնպիսի ազգային կանոններ, որոնք կարգավորում են ծախսերի բաշխումը, եթե վնասը կատարվել է մի քանի մասնակիցների

կողմից: Անդամ պետությունները կարող են հաշվի առնել, մասնավորապես, արտադրանքը օգտագործողների հատուկ իրավիճակները, որոնք կարող է պատասխանատու չլինեն շրջակա միջավայրին հասցված վնասի համար միևնույն իրավիճակներում այնպես, ինչպես պատասխանատու են այդ արտադրանքը արտադրողները: Այդ դեպքում պարտավորության բաշխումը սահմանվում է ազգային իրավունքի համաձայն,

23) իրավասու մարմինները պետք է իրավունք ունենան օպերատորից փոխհատուցում ստանալու կանխարգելիչ կամ վնասը վերացնող միջոցների ծախսերի դիմաց ողջամիտ ժամկետներում, որը հաշվվում է՝ սկսած այն ամսաթվից, երբ այդ միջոցների իրականացումն ավարտվել է,

24) անհրաժեշտ է նախատեսել, որպեսզի մատչելի լինեն իրականացման և կիրարկման արդյունավետ միջոցները՝ ապահովելով, որ համապատասխան օպերատորների և այլ շահագրգիռ անձանց օրինական շահերը բավարար չափով երաշխավորվեն: Իրավասու մարմինները պետք է պատասխանատու լինեն հատուկ գործառույթների, այդ թվում՝ համապատասխան վարչական հայեցողության համար, այն է՝ վնասի նշանակելիությունը գնահատելը և որոշելը, թե վնասը վերացնելուն ուղղված ինչ միջոցներ պետք է ձեռնարկվեն,

25) այն անձինք, որոնց վրա շրջակա միջավայրին հասցված վնասը բացասական ազդեցություն է թողել, կամ կարող է նման ազդեցություն թողնել, պետք է իրավունք ունենան դիմելու իրավասու մարմնին՝ միջոցներ ձեռնարկելու խնդրանքով: Շրջակա միջավայրի պաշտպանությունը, այնուամենայնիվ, անորոշ շահ է, որի համար անհատները միշտ չէ, որ գործողություն կձեռնարկեն կամ կարող են ձեռնարկել: Շրջակա միջավայրի պաշտպանությունը խթանող ոչ կառավարական կազմակերպությունները, ուստի, պետք է հնարավորություն ունենան պատշաճ կերպով նպաստելու սույն Հրահանգի արդյունավետ իրականացմանը,

26) համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձինք պետք է

հնարավորությունն ունենան օգտվելու իրավասու մարմնի որոշումները, գործողությունները կամ անգործությունը վերանայելու ընթացակարգերից,

27) անդամ պետությունները պետք է միջոցներ նախաձեռնեն՝ խրախուսելու համար օպերատորներին օգտվել համապատասխան ապահովության կամ ֆինանսական անվտանգության այլ ձևերից: Նրանք նաև պետք է խրախուսեն ֆինանսական ապահովության գործիքների և շուկաների զարգացումն այնպես, որ սույն Հրահանգի համաձայն սահմանված ֆինանսական պարտավորությունները արդյունավետորեն իրականացվեն,

28) եթե շրջակա միջավայրին հասցվող վնասը ազդում է կամ կարող է ազդել մի քանի անդամ պետությունների վրա, այդ անդամ պետությունները պետք է համագործակցեն՝ նպատակ հետապնդելով ապահովելու պատշաճ և արդյունավետ կանխարգելիչ կամ վնասը վերացնելու գործողություններ՝ կապված շրջակա միջավայրին հասցված ցանկացած վնասի հետ: Անդամ պետությունները կարող են ձգտել փոխհատուցել կանխարգելիչ կամ վնասը վերացնելու գործողությունների ծախսերը,

29) սույն Հրահանգը չպետք է արգելի անդամ պետություններին պահպանել կամ ընդունել առավել խիստ դրույթներ՝ շրջակա միջավայրին հասցվող վնասը կանխարգելելու կամ վերացնելու առնչությամբ. այն նաև չի արգելում անդամ պետություններին ընդունել համապատասխան միջոցներ այն իրավիճակների կապակցությամբ, երբ կարող է ծախսերի կրկնակի փոխհատուցում առաջանալ այն բանի հետևանքով, որ, սույն Հրահանգի համաձայն, իրավասու մարմինը և այն անձը, որոնք ազդեցության են ենթարկվել շրջակա միջավայրին հասցվող վնասի հետևանքով, զուգընթաց գործողություններ են ձեռնարկում,

30) սույն Հրահանգի իրականացման վերջնաժամկետից առաջ տեղի ունեցած վնասը չի կարգավորվում այդ հրահանգի դրույթներով,

31) անդամ պետությունները Հանձնաժողովին պետք է զեկուցեն սույն Հրահանգի իրականացման արդյունքում ձեռք բերված փորձառության վերաբերյալ այնպես, որ Հանձնաժողովը կարողանա որոշում ընդունել այն մասին, թե սույն Հրահանգի վերանայում անհրաժեշտ է, թե ոչ՝ հաշվի առնելով կայուն զարգացման վրա ազդեցությունները և շրջակա միջավայրի հետագա վտանգները,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Հրահանգի կարգավորման առարկան

Սույն Հրահանգը նպատակ ունի բնապահպանական պատասխանատվության շրջանակ հաստատելու, որը հենվում է «ադոտոդը վճարում է» սկզբունքի վրա՝ շրջակա միջավայրին հասցված վնասը կանխարգելելու և վերացնելու համար:

Հոդված 2

Հասկացությունները

Սույն Հրահանգի նպատակով կիրառվում են հետևյալ սահմանումները՝

1. «շրջակա միջավայրին հասցվող վնաս» նշանակում է՝

ա) պաշտպանվող տեսակներին և բնական միջավայրերին հասցված վնաս, որի մեջ մտնում է ցանկացած վնաս, որն էական բացասական ազդեցություն ունի նման բնական միջավայրերի կամ տեսակների պահպանության բարենպաստ կարգավիճակ ձեռք բերելու կամ պահպանելու վրա: Նման ազդեցությունների նշանակալիությունը պետք է գնահատվի՝ հղում կատարելով սկզբնական վիճակին՝ հաշվի առնելով I հավելվածում սահմանված չափորոշիչները:

Պաշտպանվող տեսակներին և բնական միջավայրերին հասցվող վնասը չի ներառում նախկինում սահմանված բացասական ազդեցությունները, որոնք օպերատորի գործողության արդյունք են, եթե դրա համար այդ օպերատորը համապատասխան մարմիններից հստակ թույլտվություն է ստացել՝ 92/43/ԵՏՀ հրահանգի 6(3) և (4) հոդվածը կամ 16-րդ հոդվածը կամ 79/409/ԵՏՀ հրահանգի 9-րդ հոդվածը կիրարկող դրույթների համաձայն կամ, եթե տվյալ բնական միջավայրերը և տեսակները չեն կարգավորվում Համայնքի իրավունքով՝ բնության

պահպանության վերաբերյալ ազգային իրավական նորմերի համարժեք դրույթների համաձայն.

բ) ջրին հասցվող վնաս, որը ներառում է ցանկացած վնաս, որը էական բացասական ազդեցություն ունի համապատասխան ջրերի էկոլոգիական, քիմիական և (կամ) քանակական կարգավիճակի ու (կամ) էկոլոգիական պոտենցիալի վրա, ինչպես սահմանվել է 2000/60/ԵՀ հրահանգում՝ բացառությամբ այն բացասական ազդեցությունների, որոնց դեպքում կիրառվում է այդ հրահանգի 4(7) հոդվածը.

գ) հողին հասցվող վնաս, որը ներառում է հողի ցանկացած աղտոտում, որն էական վտանգ է ներկայացնում մարդու առողջության համար՝ բացասական ազդեցության ենթարկելով՝ հողի մակերևույթին կամ նրա տակը ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներմուծելով նյութեր, պատրաստուկներ, օրգանիզմներ կամ միկրոօրգանիզմներ.

2. «վնաս» նշանակում է բնական ռեսուրսներում չափելի բացասական փոփոխություն կամ բնական ռեսուրսների հետ կապված ծառայության չափելի վատթարացում, որը կարող է ուղղակիորեն կամ անուղղակիորեն տեղի ունենալ.

3. «պաշտպանվող տեսակներ և բնական միջավայրեր» նշանակում է՝

ա) 79/409/ԵՏՀ հրահանգի 4(2) հոդվածում նշված կամ նույն Հրահանգի I հավելվածում նշված կամ 92/43/ԵՏՀ հրահանգի II և IV հավելվածներում նշված տեսակներ.

բ) 79/409/ԵՏՀ հրահանգի 4(2) հոդվածում նշված կամ նույն հրահանգի I հավելվածում նշված կամ 92/43/ԵՏՀ հրահանգի II հավելվածում նշված տեսակների միջավայրեր և 92/43/ԵՏՀ հրահանգի I հավելվածում նշված բնական միջավայրեր կամ 92/43/ԵՏՀ հրահանգի IV հավելվածում նշված տեսակների բուժման վայրեր կամ հանգստավայրեր. և

գ) եթե անդամ պետությունն այդպես է որոշում՝ ցանկացած բնական միջավայր կամ տեսակներ, որոնք նշված չեն այդ հավելվածներում և որոնց անդամ պետությունը նախատեսում է այդ երկու հրահանգում սահմանված նպատակներին համարժեք նպատակներով.

4. «պահպանության կարգավիճակ» նշանակում է՝

ա) բնական միջավայրի դեպքում՝ բնական միջավայրի և այդ միջավայրին բնորոշ տեսակների վրա ազդեցությունների ամբողջություն, որը կարող է երկարատև ժամկետով ազդել բնական տեղաբաշխման, կառուցվածքի և գործառույթների ինչպես նաև այդ տարածքին բնորոշ տեսակների երկարատև կեցության վրա՝ անդամ պետությունների եվրոպական տարածքում,

որտեղ գործում է Պայմանագիրը կամ անդամ պետությունների տարածքում կամ այդ միջավայրի բնական տարածվածության շրջանակում՝ ըստ կոնկրետ հանգամանքի.

բնական միջավայրի պահպանության կարգավիճակը համարվում է «բարենպաստ» եթե՝

- իր բնական տարածվածության շրջանակը և այդ շրջանակի սահմաններում տարածքները կայուն կամ զարգացող են.
- իր երկարատև գոյատևման համար անհրաժեշտ հատուկ կառուցվածքը և գործառույթները գործում են և հավանական է, որ կգործեն կանխատեսելի ապագայում. և
- բնորոշ տեսակների պահպանության կարգավիճակը բարենպաստ է, ինչպես սահմանված է (բ) կետում.

բ) տեսակների դեպքում՝ համապատասխան տեսակների նկատմամբ գործող ազդեցությունների ամբողջություն, որը կարող է անդամ պետությունների եվրոպական տարածքում երկարատև ժամկետով ազդել դրա պոպուլյացիայի տեղաբաշխման և տարածվածության վրա , որտեղ գործում է Պայմանագիրը կամ անդամ պետությունների տարածքում կամ այդ տեսակների տարածվածության շրջանակում՝ ըստ կոնկրետ հանգամանքի.

տեսակների պահպանության կարգավիճակը համարվում է «բարենպաստ» եթե՝

- տվյալ տեսակների պոպուլյացիայի դինամիկայի վերաբերյալ տվյալները ցույց են տալիս, որ այդ տեսակները երկարատև պահպանվում են՝ որպես իրենց բնական միջավայրերի կենսունակ բաղադրիչներ.
- տեսակների բնական տարածվածության շրջանակը չի նվազեցվում կամ հավանական է, որ չի նվազեցվի կանխատեսելի ապագայում. և
- գոյություն ունի և հավանական է, որ գոյություն կունենա բավականին մեծաթիվ միջավայր՝ դրա պոպուլյացիան երկարատև պահպանելու համար.

5. «ջրեր» նշանակում է 2000/60/ԵՇ հրահանգով կարգավորվող ջրերը.

6. «օպերատոր» նշանակում է որևէ ֆիզիկական կամ իրավաբանական, մասնավոր կամ պետական անձ, որը զբաղվում արդյունաբերական գործունեությամբ կամ վերահսկում այն, ազգային իրավունքով սահմանված լինելու դեպքում, որին էական տնտեսական իշխանություն է տրված նման գործունեության տեխնիկական իրականացման համար՝ ներառյալ այդ գործունեությամբ զբաղվելու թույլտվություն կամ արտոնագիր ունեցողը կամ այն անձը, որը գրանցում կամ ծանուցում է նման գործունեության մասին.

7. «արդյունաբերական գործունեություն» նշանակում է ցանկացած գործունեություն, որն իրականացվում է տնտեսական գործունեության, բիզնեսի ընթացքում կամ կազմակերպություններում՝ անկախ այն հանգամանքից, թե դրանք մասնավոր կամ պետական, շահույթ հետապնդող, թե չհետապնդող են.
8. «արտանետումներ» նշանակում է մարդու գործունեության հետևանքով միջավայր արտանետված նյութեր, պատրաստուկներ, օրգանիզմներ կամ միկրոօրգանիզմներ.
9. «վնասի անմիջական վտանգ» նշանակում է բավարար հավանականություն, որ մոտ ապագայում շրջակա միջավայրին վնաս կհասցվի.
10. «կանխարգելիչ միջոցներ» նշանակում է ցանկացած միջոց, որը ձեռնարկվում է՝ արձագանքելով որևէ իրավիճակի, գործունեության կամ արտանետման, որն անմիջական վտանգ է առաջացրել շրջակա միջավայրին հասցվող վնասի առումով՝ նպատակ ունենալով կանխարգելելու կամ նվազագույնի հասցնելու այդ վնասը.
11. «վնասը վերացնելու միջոցներ» նշանակում է ցանկացած գործողություն կամ գործողությունների խումբ՝ ներառյալ մեղմացնող կամ միջանկյալ միջոցները, որոնց նպատակը վնասված բնական ռեսուրսները և (կամ) խաթարված ծառայությունները վերականգնելը, վերաբնակեցնելը կամ փոխարինելը կամ այդ ռեսուրսներին կամ ծառայություններին համարժեք այլընտրանք տրամադրելն է, ինչպես սահմանված է II հավելվածում.
12. «բնական ռեսուրսներ» նշանակում է պաշտպանվող տեսակներ և բնական միջավայրեր, ջուր և հող.
13. «ծառայություններ» և «բնական ռեսուրսների հետ կապված ծառայություններ» նշանակում է բնական ռեսուրսի կողմից իրականացվող գործառնություններ՝ հօգուտ մեկ այլ բնական ռեսուրսի կամ հանրության.
14. «սկզբնական վիճակ» նշանակում է բնական ռեսուրսների կամ ծառայությունների վիճակ վնասի ժամանակ, որը գոյություն կունենար, եթե շրջակա միջավայրին հասցվող վնասը տեղի չունենար, որը որոշվում է հասանելի լավագույն տվյալների հիման վրա.
15. «վերականգնում»՝ ներառյալ «բնական վերականգնում», նշանակում է ջրերի, պաշտպանվող տեսակների և բնական միջավայրերի դեպքում վնասված բնական ռեսուրսների և (կամ) խաթարված ծառայությունների վերադարձը սկզբնական վիճակին, իսկ հողին հասցված

վնասի դեպքում՝ ցանկացած էական ռիսկի վերացում, որը կարող է բացասաբար անդրադառնալ մարդու առողջության վրա.

16. «Ծախս» նշանակում է այն ծախսերը, որոնք հիմնավորված են սույն Հրահանգի պատշաճ և արդյունավետ իրականացումն ապահովելու համար՝ ներառյալ շրջակա միջավայրին հասցվող վնասը, նման վնասի անմիջական վտանգի գնահատման ծախսերը, գործողությունների այլընտրանքային տարբերակների ծախսերը, ինչպես նաև վարչական, իրավական ու կիրարկման ծախսերը, տվյալների հավաքման ծախսերը և այլ ընդհանուր բնույթի ծախսեր, ինչպես նաև դիտանցման ու վերահսկման ծախսերը:

Հոդված 3

Գործողության ոլորտը

1. Սույն Հրահանգը կիրառվում է հետևյալի նկատմամբ՝
- ա) III հավելվածում նշված արդյունաբերական գործունեության ձևերից որևէ մեկի կողմից առաջացած՝ շրջակա միջավայրին հասցված վնաս կամ նման վնասից բխող որևէ անմիջական վտանգ, որը տեղի է ունենում գործունեության այդ ձևերի հետևանքով.
 - բ) III հավելվածում չնշված արդյունաբերական գործունեության ձևերից որևէ մեկի կողմից առաջացած՝ պաշտպանված տեսակների և բնական միջավայրերին վնաս կամ նման վնասից բխող որևէ անմիջական վտանգ, եթե օպերատորը մեղավոր է կամ անփույթ է եղել:
2. Սույն Հրահանգը կիրառվում է՝ չսահմանափակելով Համայնքի առավել խիստ օրենսդրության գործողությունը, որով կարգավորվում են սույն Հրահանգի շրջանակում կարգավորվող գործունեության տեսակներից որևէ մեկը և չսահմանափակելով Համայնքի այն օրենսդրությունը, որը իրավասությունների բախման մասին կանոններ է ներառում :
3. Չսահմանափակելով ազգային համապատասխան օրենսդրության գործողությունը՝ սույն Հրահանգը մասնավոր կողմերին չի տալիս փոխհատուցման իրավունք՝ որպես շրջակա միջավայրին հասցված վնասի կամ նման վնասից բխող անմիջական վտանգի հետևանք:

Հոդված 4

Բացառությունները

1. Սույն Հրահանգը չի կարգավորում շրջակա միջավայրին հասցված այն վնասը կամ նման վնասից բխող անմիջական վտանգը, որն առաջացել է հետևյալի հետևանքով՝

ա) զինված հակամարտություն, ռազմական գործողություններ, քաղաքացիական պատերազմ կամ ապստամբություն.

բ) բացառիկ, անխուսափելի և անդիմադրելի բնույթի բնական երևույթ:

2. Սույն Հրահանգը չի կիրառվում շրջակա միջավայրին հասցված այն վնասի կամ այդ վնասից բխող անմիջական վտանգի նկատմամբ, որն առաջացել է մի իրավիճակում, որի դեպքում պարտավորությունները կամ փոխհատուցումը կարգավորվում են IV հավելվածում նշված միջազգային կոնվենցիաների կողմից՝ ներառյալ դրանցում կատարված փոփոխությունները, որոնք գործում են սվյալ անդամ պետությունում:

3. Սույն Հրահանգը չի հակասում օպերատորի պարտավորությունները սահմանափակելու իրավունքին «Օռվային հարցերով հայցերի պարտավորությունների սահմանափակման մասին» (ՕՀՀՊՍ) կոնվենցիան, 1976թ., ներառյալ այդ կոնվենցիայում կատարված բոլոր հետագա փոփոխությունները և «Ներքին ջրերում նավարկության ժամանակ պարտավորությունների սահմանափակման մասին» (ՆՋՆԺՊՍ) Ստրասբուրգի կոնվենցիան, այդ թվում՝ այդ կոնվենցիայում կատարված բոլոր հետագա փոփոխություններն իրականացնող ազգային օրենսդրության համաձայն:

4. Սույն Հրահանգը չի կիրառվում ատոմային այնպիսի ռիսկերի կամ շրջակա միջավայրին հասցվող վնասի կամ նման վնասից բխող անմիջական վտանգի նկատմամբ, ինչպիսին կարող են առաջանալ Եվրոպական ատոմային էներգիայի համայնքը հաստատող Պայմանագրով կարգավորվող գործողություններից կամ կարող է առաջանալ մի իրավիճակից կամ գործունեությունից, որի դեպքում պարտավորությունը կամ փոխհատուցումը կարգավորվում է V հավելվածում նշված միջազգային գործիքներից որևէ մեկով՝ ներառյալ դրանցում կատարված փոփոխությունները:

5. Սույն Հրահանգը կիրառվում է միայն շրջակա միջավայրին հասցվող այն վնասի կամ նման վնասից բխող անմիջական վտանգի նկատմամբ, որոնք առաջացել են ցրված բնույթ ունեցող աղտոտումից, եթե հնարավոր է պատճառահետևանքային կապ հաստատել վնասի և առանձին օպերատորների գործունեության միջև:

6. Սույն Հրահանգը չի կիրառվում գործունեության այն ձևերի նկատմամբ, որոնց հիմնական նպատակը պետական պաշտպանությանը և միջազգային անվտանգությանը ծառայելն է, ինչպես նաև գործունեության այն ձևերի նկատմամբ, որոնց հիմնական նպատակը բնական աղետներից պաշտպանվելն է :

Հոդված 5

Կանխարգելիչ գործողությունը

1. Եթե շրջակա միջավայրին հասցվող վնասը դեռ տեղի չի ունեցել, բայց գոյություն ունի նման վնաս հասցնելու անմիջական վտանգ, այդ դեպքում օպերատորն անհապաղ նախաձեռնում է անհրաժեշտ կանխարգելիչ միջոցներ:
2. Անդամ պետությունները սահմանում են, որ հարկ եղած դեպքում, և եթե շրջակա միջավայրին հասցվող վնասի անմիջական վտանգը չի վերացել, չնայած այն բանի, որ օպերատորը նախաձեռնել է կանխարգելիչ միջոցներ, այդ դեպքում օպերատորը պետք է իրավասու մարմինն հնարավորինս շուտ տեղեկացնի իրավիճակի բոլոր հայեցակետերի մասին:
3. Իրավասու մարմինը կարող է ցանկացած ժամանակ՝
 - ա) պահանջել օպերատորից տեղեկություններ տրամադրել շրջակա միջավայրին հասցվող վնասի անմիջական վտանգի մասին կամ նման անմիջական վտանգի կասկածելի դեպքերի մասին.
 - բ) պահանջել օպերատորից ձեռնարկել անհրաժեշտ կանխարգելիչ միջոցներ.
 - գ) հրահանգներ տալ օպերատորին, որից հետո վերջինս պետք է անհրաժեշտ կանխարգելիչ միջոցներ նախաձեռնի կամ
 - դ) ինքնուրույն ձեռնարկի անհրաժեշտ կանխարգելիչ միջոցներ.
4. Իրավասու մարմինը պահանջում է, որ օպերատորի կողմից ձեռնարկվեն կանխարգելիչ միջոցներ: Եթե օպերատորը չի կատարում 1 կամ 3(բ) կամ (գ) պարբերություններում սահմանված պարտավորությունները, կամ հնարավոր չէ սահմանել օպերատորին կամ սույն Հրահանգի համաձայն պարտավոր չէ կրել ծախսերը, այդ դեպքում իրավասու մարմինը կարող է ինքը միջոցներ ձեռնարկել:

Հոդված 6

Վնասը վերացնելու գործողությունը

1. Եթե շրջակա միջավայրին վնաս է հասցվել, այդ դեպքում առանց հապաղման օպերատորը տեղեկացնում է իրավասու մարմնին իրավիճակի բոլոր հայեցակետերի մասին և նախաձեռնում է՝

ա) բոլոր գործնականում հնարավոր քայլերը՝ անմիջապես վերահսկելու, սահմանափակելու, վերացնելու կամ որևէ այլ կերպ կառավարելու համապատասխան աղտոտիչները և (կամ) վնասի այլ գործոններ՝ սահմանափակելու կամ կանխարգելելու համար շրջակա միջավայրի հետագա վնասները և մարդու առողջությանը հասցվող բացասական ազդեցությունները կամ ծառայությունների խաթարումը և

բ) անհրաժեշտ վնասը վերացնելու միջոցներ՝ 7-րդ հոդվածի համաձայն:

2. Իրավասու մարմինը կարող է ցանկացած ժամանակ՝

ա) պահանջել օպերատորից տրամադրել լրացուցիչ տեղեկություններ՝ տեղի ունեցած ցանկացած վնասի մասին.

բ) պահանջել օպերատորից՝ ընդունել կամ ստանալ հրահանգներ, նախաձեռնել գործնականում հնարավոր բոլոր քայլերը՝ անմիջապես վերահսկելու, սահմանափակելու, վերացնելու կամ որևէ այլ կերպ կառավարելու համապատասխան աղտոտիչները և (կամ) վնասի այլ գործոններ՝ սահմանափակելու կամ կանխարգելելու համար շրջակա միջավայրին հասցվող հետագա վնասները և մարդու առողջությանը հասցվող բացասական ազդեցությունները կամ ծառայությունների խաթարումը և

գ) պահանջել օպերատորից՝ ձեռնարկել վնասը վերացնելու անհրաժեշտ միջոցներ.

դ) հրահանգներ տալ օպերատորին, որոնց նա պետք է հետևի վնասը վերացնելու անհրաժեշտ միջոցներ նախաձեռնելիս. կամ

ե) ինքնուրույն ձեռնարկել վնասը վերացնելու անհրաժեշտ միջոցներ:

3. Իրավասու մարմինը պահանջում է, որ օպերատորի կողմից վնասը վերացնելու միջոցներ ձեռնարկվեն: Եթե օպերատորը չի կատարում 1 կամ 2(բ), (գ) կամ (դ) պարբերություններում սահմանված պարտավորությունները, կամ հնարավոր չէ հայտնաբերել օպերատորին կամ, սույն Հրահանգի համաձայն, պարտավոր չէ կրել ծախսերը, այդ դեպքում իրավասու մարմինը կարող է ինքը միջոցներ ձեռնարկել՝ որպես ամենավերջին քայլ:

Հոդված 7

Վնասը վերացնելու միջոցների սահմանումը

1. II հավելվածի համաձայն՝ օպերատորները սահմանում են վնասը վերացնելու պոտենցիալ միջոցներ և ներկայացնում են դրանք իրավասու մարմնի հավանությանը, եթե իրավասու մարմինը գործողություններ չի նախաձեռնել՝ 6(2)(ե) և (3) հոդվածի համաձայն:
2. Իրավասու մարմինը որոշում է ընդունում այն մասին, թե վնասը վերացնելու ինչ միջոցներ պետք է իրականացվեն՝ II հավելվածի համաձայն և համապատասխան օպերատորի հետ համագործակցության պայմաններում՝ ըստ պահանջի:
3. Եթե տեղի է ունեցել շրջակա միջավայրին հասցված վնասի մի քանի դեպքեր այնպես, որ իրավասու մարմինը չի կարող ապահովել, որ անհրաժեշտ վնասը վերացնելու միջոցներ նախաձեռնվեն միաժամանակ, այդ դեպքում իրավասու մարմինն իրավունք ունի որոշելու, թե շրջակա միջավայրին հասցված վնասի որ դեպքը պետք է վերացվի առաջինը:
- Այդ որոշումն ընդունելիս իրավասու մարմինը հաշվի է առնում, մասնավորապես, շրջակա միջավայրի տվյալ վնասի տարբեր դեպքերի բնույթը, մասշտաբներն ու ծանրությունը և թե արդյոք հնարավոր է վերականգնել այն բնական ճանապարհով: Մարդու առողջությանը հասցված վտանգները նույնպես պետք է հաշվի առնվեն:
4. Իրավասու մարմինը հրավիրում է 12(1) հոդվածում նշված անձանց և ցանկացած դեպքում այն անձանց, ում հողի վրա պետք է իրականացվեն վնասը վերացնելու միջոցները, ներկայացնել իրենց դիտողությունները, որոնք հաշվի են առնվում:

Հոդված 8

Կանխարգելման և վնասը վերացնելու ծախսերը

1. Օպերատորը կրում է կանխարգելման և վնասը վերացնելու միջոցների ծախսերը՝ սույն Հրահանգի համաձայն:
2. 3-րդ և 4-րդ պարբերությունների համաձայն՝ իրավասու մարմինը, մասնավորապես, սեփականության ապահովության կամ այլ համապատասխան երաշխիքների միջոցով փոխհատուցում է ստանում օպերատորից, որը վնասի կամ վնասի անմիջական վտանգի պատճառ է եղել, այն ծախսերի դիմաց, որն ինքը կատարել է՝ սույն Հրահանգի համաձայն կանխարգելիչ կամ վնասը վերացնելու միջոցներ ձեռնարկելու համար:

Այնուամենայնիվ, իրավասու մարմինը կարող է որոշում ընդունել փոխհատուցում չպահանջել բոլոր ծախսերի համար, եթե կատարված ծախսերն ավելին են, քան փոխհատուցման ենթակա գումարը կամ եթե օպերատորին հնարավոր չէ հայտնաբերել:

3. Օպերատորից չի պահանջվում կրել կանխարգելման կամ վնասը վերացնելու միջոցների ծախսերը, որոնք կատարվել են սույն Հրահանգի համաձայն, եթե վերջինս կարող է ապացուցել, որ շրջակա միջավայրին հասցվող վնասը կամ նման վնասի անմիջական վտանգը՝

ա) առաջ է եկել երրորդ կողմի կողմից և տեղի է ունեցել՝ չնայած այն բանի, որ անվտանգության համապատասխան միջոցներ են ձեռնարկվել. կամ

բ) պետական մարմնի կողմից պարտադիր կատարման հրամանի կամ հրահանգի իրականացման արդյունք է, բացի այն հրամանից կամ հրահանգից, որը կատարվել է արտանետման կամ օպերատորի գործունեության հետևանքով առաջացած իրավիճակից հետո:

Նման դեպքերում անդամ պետությունները համապատասխան միջոցներ են ձեռնարկում՝ հնարավորություն տալու համար օպերատորին փոխհատուցել կատարված ծախսերի դիմաց:

4. Անդամ պետությունները կարող են թույլատրել օպերատորին չկրել վնասը վերացնելու միջոցների ծախսերը, որոնք ձեռնարկվել են սույն Հրահանգի համաձայն, եթե վերջինս ապացուցում է, որ ինքը մեղավոր կամ անփույթ չի եղել և շրջակա միջավայրին հասցվող վնասի պատճառ է եղել՝

ա) արտանետումը կամ այն իրադարձությունը, որը հստակորեն արտոնվել է գործող ազգային իրավական նորմերի և կանոնակարգերի համաձայն (որոնք կիրարկում են III հավելվածում սահմանված և Համայնքի կողմից ընդունված օրենսդրական ակտերն ու կիրառելի են արտանետման կամ գործողության պահին) և համապատասխանում են շնորհված կամ տրամադրված արտոնագրի պահանջներին.

բ) արտանետումը կամ գործունեությունը կամ գործունեության ընթացքում արտադրանքի կիրառությունը, որոնք, ըստ օպերատորի, չէին կարող շրջակա միջավայրի վնաս առաջացնել՝ գիտական և տեխնիկական գիտելիքների հիման վրա այն ժամանակ, երբ կատարվել է արտանետումը կամ իրականացվել՝ գործունեությունը:

5. 5(3) և (4) հոդվածի ու 6(2) և (3) հոդվածի համաձայն՝ իրավասու մարմնի կողմից ձեռնարկված միջոցները չեն սահմանափակում համապատասխան օպերատորի

պարտավորությունը՝ սույն Հրահանգի համաձայն, և չեն սահմանափակում Պայմանագրի 87-րդ և 88-րդ հոդվածների գործողությունը:

Հոդված 9

Ծախսերի բաշխումը, եթե վնասը տեղի է ունեցել մի քանի կողմերի կողմից

Սույն Հրահանգը չի սահմանափակում ազգային կանոնակարգերի որևէ դրույթի գործողությունը, որը վերաբերում է ծախսերի բաշխմանը, եթե վնասը տեղի է ունեցել մի քանի կողմերի կողմից, հատկապես եթե խոսքը վերաբերում է պարտավորության կիսմանը՝ արտադրողի և արտադրանքն օգտագործողի միջև:

Հոդված 10

Ծախսերի փոխհատուցումը սահմանափակող ժամկետ

Իրավասու մարմինն իրավունք ունի ձեռնարկելու ծախսերի փոխհատուցման վարույթներ օպերատորի դեմ, կամ, հարկ եղած դեպքում, երրորդ կողմի դեմ, որի պատճառով վնաս կամ վնասի անմիջական վտանգ է առաջացել՝ սույն Հրահանգի համաձայն ձեռնարկվող որևէ միջոցի առնչությամբ, այդ միջոցների ավարտից կամ պատասխանատու օպերատորի կամ երրորդ կողմի հայտնաբերումից հետո հինգ տարիների ընթացքում՝ նայած թե որն ավելի ուշ վաղեմություն ունի:

Հոդված 11

Իրավասու մարմինը

1. Անդամ պետությունները, սույն Հրահանգում սահմանված պահանջները պահպանելու նպատակով, իրավասու մարմին(ներ են նշանակում):
2. Իրավասու մարմինը պատասխանատու է սահմանել, թե որ օպերատորն է պատճառել վնասը կամ վնասի անմիջական վտանգի պատճառ եղել, գնահատել վնասի նշանակալիությունը և որոշել, թե վնասը վերացնելու ինչ միջոցներ պետք է նախաձեռնվեն՝ II

հավելվածի համաձայն: Այդ նպատակով իրավասու մարմինն իրավունք ունի պահանջել համապատասխան օպերատորից իրականացնելու սեփական գնահատումը և տրամադրել անհրաժեշտ տեղեկություններ ու տվյալներ:

3. Անդամ պետություններն ապահովում են, որ իրավասու մարմինը կարողանա լիազորել երրորդ անձանց կամ պահանջել նրանցից անհրաժեշտ կանխարգելիչ կամ վնասը վերացնելու միջոցներ իրականացնել:

4. Սույն Հրահանգի համաձայն ընդունված ցանկացած որոշում, որը պարտադրում է կանխարգելիչ կամ վնասը վերացնելու միջոցներ, հստակ նշում է այն հիմքերը, որոնց վրա հենվում է այդ որոշումը: Համապատասխան օպերատորը հնարավորինս շուտ տեղեկացվում է այդ որոշման մասին: Նա միաժամանակ տեղեկացվում է իրեն համար մատչելի իրավական պաշտպանության միջոցների և նման իրավական պաշտպանության միջոցների նկատմամբ կիրառելի ժամանակահատվածների մասին՝ տվյալ անդամ պետության գործող օրենքների համաձայն:

Հոդված 12

Գործողություն նախաձեռնելու պահանջը

1. Ֆիզիկական կամ իրավաբանական անձինք՝

- ա) որոնց վրա ազդել կամ կարող է ազդել շրջակա միջավայրին հասցված վնասը կամ
- բ) ովքեր բավարար չափով շահագրգռված են շրջակա միջավայրին վերաբերող որոշման կայացման հարցում, որը վերաբերում է հասցված վնասին կամ որպես այլընտրանք՝
- գ) որոնք պնդում են, որ իրավունքը սահմանափակվել է, եթե անդամ պետության վարչական դատավարության իրավունքով դա պահանջվում է որպես նախապայման՝

իրավունք ունեն իրավասու մարմին ներկայացնել շրջակա միջավայրին հասնող վնասի կամ նման վնասի անմիջական վտանգի դեպքերի շուրջ իրենց դիտողությունները, որոնց մասին իրենք տեղյակ են և իրավունք ունեն իրավասու մարմնից պահանջել գործողություններ ձեռնարկել՝ սույն Հրահանգի համաձայն:

«Բավարար շահագրգռվածությունը»-ը և «իրավունքի սահմանափակում» -ը սահմանվում են անդամ պետությունների կողմից:

Այդ նպատակով, այն ոչ կառավարական կազմակերպությունները, որոնք զբաղվում են շրջակա միջավայրի պաշտպանությունը խթանելով և բավարարում են ազգային իրավունքի բոլոր պահանջները, համարվում են բավարար շահագրգռվածություն ունեցող՝ (բ) ենթապարբերության նպատակով: Համարվում է, որ նման կազմակերպությունները սահմանափակման ենթակա իրավունքներ ունեն՝ (գ) ենթապարբերության նպատակով:

2. Գործողություն նախաձեռնելու պահանջին կից ներկայացվում են համապատասխան տեղեկատվություն և տվյալներ, որոնք աջակցում են շրջակա միջավայրի տվյալ վնասի վերաբերյալ ներկայացված դիտողություններին:

3. Եթե գործողություն նախաձեռնելու պահանջը և հարակից դիտողությունները՝ իրականությանը մոտ եղանակով, ցույց են տալիս, որ շրջակա միջավայրին հասցվող վնաս գոյություն ունի, իրավասու մարմինը քննարկում է նման դիտողությունները և գործողություն նախաձեռնելու պահանջը: Նման հանգամանքներում իրավասու մարմինը համապատասխան օպերատորին հնարավորություն է տալիս ծանոթացնելու իր տեսակետներին՝ կապված գործողություն նախաձեռնելու պահանջի և հարակից դիտողությունների հետ:

4. Իրավասու մարմինը հնարավորինս շուտ և ցանկացած դեպքում ազգային իրավունքի համապատասխան դրույթների համաձայն, տեղեկացնում է 1-ին պարբերության մեջ նշված դիտողություններ ներկայացրած անձանց՝ գործողությունը նախաձեռնելուն միանալու կամ այն մերժելու իրենց որոշման և դրա հիմնավորումների մասին:

5. Անդամ պետությունները կարող են որոշում ընդունել 1-ին և 4-րդ պարբերությունները չկիրառելու մասին՝ վնասի անմիջական վտանգ պարունակող դեպքերի համար:

Հոդված 13

Վերանայման ընթացակարգերը

1. 12(1) հոդվածում նշված անձինք իրավունք ունեն դիմելու դատարան կամ մեկ այլ անկախ և անկողմնակալ պետական մարմին, որն իրավասու է վերանայելու սույն Հրահանգի համաձայն՝ իրավասու մարմնի կողմից ընդունված որոշումների, գործողությունների կամ անգործության ընթացակարգային և իրական օրինականությունը:

2. Սույն Հրահանգը չի սահմանափակում ազգային իրավունքի դրույթների գործողությունը, որոնք կարգավորում են արդարադատության մատչելիության հարցը և որոնք պահանջում

են, որ վարչական վերանայման ընթացակարգերը սպառվեն՝ նախքան դատական վարույթներին դիմելը:

Հոդված 14

Ֆինանսական ապահովությունը

1. Անդամ պետությունները միջոցներ են ձեռնարկում՝ խրախուսելու համար ֆինանսական ապահովության գործիքներն և շուկաները համապատասխան տնտեսական և ֆինանսական օպերատորների կողմից՝ ներառյալ ֆինանսական մեխանիզմների սնանկության դեպքում՝ նպատակ ունենալով հետապնդելով օպերատորին հնարավորություն տալ կիրառելու ֆինանսական երաշխիքներ՝ սույն Հրահանգի պարտավորությունները բավարարելու համար:

2. Նախքան 2010 թվականի ապրիլի 30-ը՝ Հանձնաժողովը հաշվետվություն է ներկայացնում՝ սույն Հրահանգի արդյունավետության մասին շրջակա միջավայրին հասցվող վնասների իրական վնասը վերացնելու, ողջամիտ ծախսերի հասանելիության, ապահովագրության պայմանների և ֆինանսական ապահովության այլ տեսակների գծով գործունեության այն ձևերի համար, որոնք նշված են III հավելվածում: Ֆինանսական ապահովության առումով հաշվետվությունները ներառում են նաև հետևյալ հայեցակետերը՝ աստիճանական մոտեցում, ֆինանսական երաշխիքի վերին շեմ և ցածր ռիսկայնության գործողությունների բացառում: Այդ հաշվետվության համատեքստում և հաշվի առնելով երկարաձգված ազդեցությունների գնահատումը՝ ներառյալ ծախսերի և օգուտների վերլուծությունը, Հանձնաժողովը, հարկ եղած դեպքում, ֆինանսական ապահովության ներդաշնակեցված պարտադիր համակարգի նպատակով առաջարկներ է ներկայացնում :

Հոդված 15

Անդամ պետությունների միջև համագործակցությունը

1. Եթե շրջակա միջավայրին հասցվող վնասն ազդում է կամ կարող է ազդել մի քանի անդամ պետությունների վրա, այդ անդամ պետությունները պետք է համագործակցեն տեղեկատվության համապատասխան փոխանակման միջոցով՝ նպատակ ունենալով ապահովելու կանխարգելիչ կամ վնասը վերացնելու գործողությունների նախաձեռնում՝ շրջակա միջավայրին հասցված վնասի հետ կապված:

2. Եթե շրջակա միջավայրին վնաս է հասցվել, այն անդամ պետությունը, որի տարածքում վնասը ծագել է, բավարար տեղեկատվություն է տրամադրում պոտենցիալ կերպով ազդեցության ենթարկված անդամ պետություններին:

3. Եթե անդամ պետությունն իր տարածքում հայտնաբերում է հասցված վնասը, որը չի ծագել իր տարածքում, այն կարող է այդ հարցի մասին զեկուցել Հանձնաժողովին և ցանկացած այլ համապատասխան անդամ պետության. այն հանդես է գալիս կանխարգելիչ կամ վնասը վերացնելու միջոցներ ընդունելու առաջարկներով և, սույն Հրահանգի համաձայն, կարող է փոխհատուցում պահանջել այն ծախսերի համար, որոնք ինքը կատարել է՝ կանխարգելիչ կամ վնասը վերացնելու միջոցների կապակցությամբ:

Հոդված 16

Ազգային իրավական նորմերի հետ փոխհարաբերությունը

1. Սույն Հրահանգը չի արգելում անդամ պետությունների՝ պահպանել կամ ընդունել առավել խիստ դրույթներ շրջակա միջավայրին հասցվող վնասը կանխարգելելու կամ վերացնելու մասին՝ ներառյալ լրացուցիչ գործողությունների սահմանման առումով, որոնք պետք է պահպանեն սույն Հրահանգի՝ կանխարգելման և վնասի վերացման մասին պահանջների և այլ պատասխանատու կողմերի սահմանման առումով:

2. Սույն Հրահանգը չի արգելում անդամ պետություններին ընդունել համապատասխան միջոցներ, օրինակ՝ ծախսերի կրկնակի փոխհատուցումն արգելելու միջոցներ՝ այնպիսի իրավիճակների առումով, երբ սույն Հրահանգի համաձայն, իրավասու մարմինը գործողություն է ձեռնարկել՝ ի լրում այն անձի, որի սեփականությունը ազդեցության է ենթարկվել՝ շրջակա միջավայրին հասցվող վնասի հետևանքով:

Հոդված 17

Ժամանակավոր կիրառումը

Սույն Հրահանգը չի կիրառվում՝

- արտանետման, իրավիճակի կամ դիպվածի հետևանքով հասցված վնասի դեպքում, որը տեղի է ունեցել 19(1) հոդվածում նշված ամսաթվից առաջ.

- արտանետման, իրավիճակի կամ դիպվածի հետևանքով հասցված վնասի դեպքում, որը տեղի է ունեցել 19(1) հոդվածում նշված ամսաթվից հետո, եթե այն ծագում է որոշակի գործունեությունից, որն սկսվել և ավարտվել է՝ նախքան այդ ամսաթիվը.
- այն վնասի դեպքում, եթե 30 տարուց ավելի ժամանակ է անցել՝ սկսած այն պահից, երբ տեղի են ունեցել վնաս առաջացնող արտանետումը, իրավիճակը կամ դիպվածը

Հոդված 18

Հաշվետվություններն ու վերանայումը

1. Անդամ պետությունները հաշվետվություն են ներկայացնում Հանձնաժողով՝ սույն Հրահանգի կիրառությամբ ձեռք բերված փորձառության մասին ամենաուշը՝ մինչև 2013 թվականի ապրիլի 30-ը: Այդ հաշվետվությունները ներառում են VI հավելվածում սահմանված տեղեկատվությունը և տվյալները:
2. Հենվելով այդ հաշվետվությունների վրա՝ Հանձնաժողովը, նախքան 2014 թվականի ապրիլի 30-ը, հաշվետվություն է ներկայացնում Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ՝ ներառելով համապատասխան առաջարկներ՝ փոփոխություններ կատարելու նպատակով:
3. 2-րդ պարբերության մեջ նշված հաշվետվությամբ վերանայվում է՝
 - ա) հետևյալ հոդվածների կիրառությունը՝
 - 4(2) և (4) հոդվածը՝ սույն Հրահանգի շրջանակից IV և V հավելվածներում նշված միջազգային գործիքներով կարգավորվող ադտոտումը բացառելու մասով, և
 - 4(3) հոդվածը՝ 4(3) հոդվածում նշված միջազգային կոնվենցիաների համաձայն պարտավորությունը սահմանափակելու՝ օպերատորի իրավունքի մասով:

Հանձնաժողովը հաշվի է առնում համապատասխան միջազգային հարթակներում ձեռք բերված փորձառությունը, ինչպիսին են, օրինակ՝ Ծովագնացության միջազգային կազմակերպությունը, Եվրատոմը և համապատասխան միջազգային պայմանագրերը: Հաշվի է առնվում նաև, թե ինչ չափով են այդ գործիքներն ուժի մեջ մտել և (կամ) իրականացվել անդամ պետությունների կողմից և (կամ) փոփոխվել՝ հաշվի առնելով նման գործունեությունից ծագող՝ շրջակա միջավայրին հասցված վնասի բոլոր դեպքերը և վնասը վերացնելու գործողությունները, ինչպես նաև անդամ պետություններում պարտավորությունների մակարդակի տարբերությունները: Նկատի է առնվում նաև նավի

սեփականատիրոջ պարտավորության և նավթ ստացողների ներդրումների միջև եղած հարաբերությունը՝ հաշվի առնելով Նավթի աղտոտման դեմ փոխհատուցման միջազգային ֆոնդերի կողմից կատարված համապատասխան ուսումնասիրությունները:

- բ) սույն Հրահանգի կիրառությունը շրջակա միջավայրին գենետիկորեն փոփոխված օրգանիզմների (ԳՓՕ) կողմից հասցված վնասի մասով, մասնավորապես, հաշվի առնելով համապատասխան միջազգային հարթակներում և կոնվենցիաներով ձեռք բերված փորձառությունը, ինչպիսիք են, օրինակ՝ «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիան և «Կենսաանվտանգության մասին» Կարթագենի արձանագրությունը, ինչպես նաև ԳՓՕ-ների կողմից շրջակա միջավայրին հասցված վնասի ցանկացած դեպք.
- գ) սույն Հրահանգի կիրառությունը պաշտպանվող տեսակների և բնական միջավայրերի մասով.
- դ) գործիքներ, որոնք կարող են ինկորպորացիայի ենթարկվել III, IV և V հավելվածներում:

Հոդված 19

Կիրարկումը

1. Անդամ պետությունները, նախքան 2007 թվականի ապրիլի 30-ը, գործողության մեջ են դնում սույն Հրահանգի հետ համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ իրավական նորմեր, կանոնակարգեր և վարչական ակտեր: Նրանք այդ մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են այս ակտերը, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ պետք է ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Այդպիսի հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում իրենց ազգային իրավունքի հիմնական դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում՝ աղյուսակի հետ միասին, որը ցույց է տալիս, թե սույն Հրահանգի դրույթներն ինչպես են համապատասխանում ընդունված ազգային օրենսդրական դրույթներին:

Հոդված 20

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության Պաշտոնական տեղեկագրում իր հրապարակման օրը:

Հոդված 21

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

2(1)(Ա) ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Պետք է գնահատվի շրջակա միջավայրին հասցված վնասի նշանակալիությունը, որը բացասական ազդեցություն է թողնում կամ պահպանում է նման ազդեցությունը շրջակա միջավայրի կամ տեսակների պաշտպանության բարենպաստ կարգավիճակի վրա՝ հղում կատարելով պահպանության կարգավիճակին շրջակա միջավայրին հասցված վնասի պահին, այդ բնական միջավայրերի կամ տեսակների գեղագիտական միջավայրում մատուցվող ծառայություններին և բնական վերականգնման կարողությանը: Ելակետային վիճակի նկատմամբ էական բացասական փոփոխությունները պետք է սահմանվեն չափելի տվյալների միջոցով, ինչպիսիք են՝

- մարդկանց թիվը, նրանց խտությունը կամ բնակեցված տարածքը.
- կոնկրետ անձանց կամ վնասի ենթարկված տարածքի դերը տեսակների կամ բնական միջավայրի պահպանության առումով, տեսակների կամ բնական միջավայրի հազվագյուտ լինելու հանգամանքը (գնահատումը կատարվում է տեղական, տարածաշրջանային և ավելի բարձր մակարդակով՝ ներառյալ Համայնքի մակարդակը).
- տեսակների բազմացման կարողությունը (այդ տեսակներին կամ պոպուլյացիային հատուկ դինամիկայի համաձայն), դրա կենսունակությունը կամ բնական միջավայրի՝ բնական վերականգնման կարողությունը (բնորոշ տեսակներին կամ դրանց պոպուլյացիաներին հատուկ դինամիկայի համաձայն).
- վնասը տեղի ունենալուց հետո տեսակների կամ բնական միջավայրերի կարողությունը՝ կարճ ժամկետում առանց որևէ միջամտության (բացառությամբ ընդլայնված պաշտպանական միջոցների) վերականգնել այն վիճակը, որը բացառապես տեսակների կամ բնական միջավայրի դինամիկայի շնորհիվ առաջացնում է այնպիսի դրություն, որը հավասարազոր կամ առավել բարձր է ելակետային վիճակից:

Մարդու առողջության նկատմամբ ապացուցված ազդեցություն ունեցող վնասը պետք է դասակարգվի որպես էական վնաս:

Հետևյալը չպետք է դասակարգվի որպես էական վնաս՝

- բացասական տատանումները, որոնք առավել փոքր են, քան բնական տատանումները և որոնք նորմալ են համարվում՝ տվյալ տեսակների և բնական միջավայրի համար.

- բնական պատճառների հետևանքով առաջացած բացասական տատանումները կամ այնպիսի տատանումներ, որոնք տվյալ տեղանքի բնականոն կառավարմանը վերաբերող միջամտության հետևանք են, այնպես, ինչպես դրանք սահմանված են բնական միջավայրի արձանագրություններում կամ թիրախային փաստաթղթերում կամ, ինչպես դրանք նախկինում իրականացվել են սեփականատերերի կամ օպերատորների կողմից.
- տեսակներին կամ բնական միջավայրերին հասցված վնասը, որի համար սահմանված է, որ այն կարճ ժամկետում առանց որևէ միջամտության կվերականգնվի սկզբնական վիճակը կամ այնպիսի վիճակ, որ բացառապես տեսակների կամ բնական միջավայրի դինամիկայի շնորհիվ առաջացնում է այնպիսի դրություն, որը հավասարագոր կամ առավել բարձր է ելակետային վիճակից:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՀԱՍՑՎՈՂ ՎՆԱՍԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Սույն Հավելվածը սահմանում է ընդհանուր շրջանակ, որին պետք է հետևել՝ ընտրելու համար ամենահարմար միջոցները՝ շրջակա միջավայրին հասցվող վնասի վերացումը ապահովելու նպատակով:

1. Ջրին կամ պաշտպանվող տեսակներին կամ բնական միջավայրերին հասցվող վնասի վերացումը

Ջրի կամ պաշտպանվող տեսակների կամ բնական միջավայրի առնչությամբ շրջակա միջավայրին հասցվող վնասի վերացումը ձեռք է բերվում շրջակա միջավայրի վերականգնման միջոցով մինչև սկզբնական վիճակը՝ առաջնային, լրացուցիչ կամ փոխհատուցող վերականգնման միջոցով եթե՝

- ա) վնասի «առաջնային» վերացումը միջոց է, որը վնասված բնական ռեսուրսները և (կամ) վատթարացած ծառայությունները վերադարձնում է մինչև սկզբնական վիճակ կամ դրան մոտ վիճակ.
- բ) վնասի «լրացուցիչ» վերացումը վերականգնման միջոց է, որը ձեռնարկվում է բնական ռեսուրսների և (կամ) ծառայությունների նկատմամբ՝ փոխհատուցելու համար, որ առաջնային վերականգնումը լիովին չի վերականգնել վնասված բնական ռեսուրսները և (կամ) ծառայությունները.
- գ) վնասի «փոխհատուցող» վերացումը ցանկացած գործողություն է, որը ձեռնարկվում է՝ փոխհատուցելու բնական ռեսուրսների և (կամ) ծառայությունների միջանկյալ կորուստները, որոնք տեղի են ունեցել վնասի պահին մինչև այն պահը, երբ առաջնային վերականգնումն ամբողջովին իրականացվել է.
- դ) «միջանկյալ կորուստներ» նշանակում է կորուստներ, որոնք առաջանում են այն պատճառով, որ վնասված բնական ռեսուրսները և (կամ) ծառայությունները չեն կարողանում կատարել իրենց էկոլոգիական գործառույթները կամ այլ բնական ռեսուրսների կամ հանրությանը ծառայություններ մատուցել, քանի դեռ առաջնային կամ լրացուցիչ միջոցներ չեն իրականացվել: Այն չի ներառում ֆինանսական փոխհատուցում հանրության համար:

Եթե առաջնային վերականգնման հետևանքով շրջակա միջավայրը չի վերականգնվում մինչև սկզբնական վիճակը, այդ դեպքում ձեռնարկվում են վնասի վերացման լրացուցիչ միջոցներ:

Բացի այդ, ձեռնարկվում են փոխհատուցող վերականգնման միջոցներ փոխհատուցելու համար միջանկյալ վնասները:

Շրջակա միջավայրի վնասի վերացումը ջրին կամ պաշտպանվող տեսակներին կամ բնական միջավայրին հասցված վնասի առումով նաև նշանակում է, որ պետք է վերացվի ցանկացած էական ռիսկ, որը բացասական ազդեցություն կարող է ունենալ մարդու առողջություն վրա:

1.1 Վնասի վերացման նպատակները

Վնասի վերացման առաջնային նպատակը

1.1.1 «առաջնային» վերացման նպատակը վնասված բնական ռեսուրսները և (կամ) ծառայությունները՝ մինչև սկզբնական վիճակը վերականգնելն է

Վնասի վերացման լրացուցիչ նպատակը

1.1.2 Եթե վնասի առաջնային վերացման հետևանքով շրջակա միջավայրը չի վերականգնվում մինչև սկզբնական վիճակը, այդ դեպքում վնասի վերացման լրացուցիչ միջոցներ են ձեռնարկվում: Վնասի վերացման լրացուցիչ միջոցի նպատակը բնական ռեսուրսների և (կամ) ծառայությունների միննույն մակարդակը (անհրաժեշտության դեպքում՝ այլընտրանքային տեղանքում) ապահովելն է, որը կապահովվեր, եթե վնասի ենթարկված տեղանքը վերականգնվեր՝ մինչև սկզբնական վիճակը: Եթե հնարավոր է և հարկ եղած դեպքում այլընտրանքային տեղանքը աշխարհագրական տեսանկյունից պետք է միացված լինի վնասված տեղանքին՝ հաշվի առնելով ազդեցության ենթարկված պոպուլյացիայի շահերը:

Վնասի վերացման փոխհատուցող միջոցի նպատակը

1.1.3 Վնասի վերացման փոխհատուցող միջոց ձեռնարկվում է՝ փոխհատուցելու համար բնական ռեսուրսների և ծառայությունների միջանկյալ վնասները, որոնք պետք է վերականգնվեն: Փոխհատուցումը բաղկացած է պաշտպանվող բնական միջոցների և տեսակների կամ ջրի լրացուցիչ բարելավումների՝ վնասի ենթարկված կամ այլընտրանքային տեղանքում: Այն չի ներառում ֆինանսական փոխհատուցում հանրության համար:

1.2. Վնասի վերացման միջոցների սահմանումը

Վնասի վերացման առաջնային միջոցների սահմանումը

1.2.1 Հաշվի են առնվում այն տարբերակները, որոնք բաղկացած են բնական ռեսուրսները և ծառայությունները մինչև սկզբնական վիճակ հրատապ հիմունքով անմիջականորեն վերականգնելու գործողություններից կամ բնական ճանապարհով վերականգնումից:

Վնասի վերացման լրացուցիչ և փոխհատուցող միջոցների սահմանումը

1.2.2 Վնասի վերացման լրացուցիչ և փոխհատուցող միջոցների մասշտաբները սահմանելիս, նախ և առաջ պետք է հաշվի առնվի ռեսուրսից-ռեսուրս կամ ծառայությունից-ծառայություն համարժեքության մոտեցումները: Այս մոտեցումների դեպքում նախ և առաջ հաշվի են առնվում այն գործողությունները, որոնք ապահովում են բնական ռեսուրսների և (կամ) ծառայությունների միևնույն տեսակը, որակը և քանակությունը՝ ի համեմատություն վնասվածների: Եթե դա հնարավոր չէ, տրամադրվում են այլընտրանքային բնական ռեսուրսներ և (կամ) ծառայություններ: Օրինակ՝ որակի նվազեցումը կարող է փոխհատուցվել վնասի վերացման միջոցների քանակի ավելացմամբ:

1.2.3 Եթե հնարավոր չէ օգտագործել ռեսուրսից-ռեսուրս կամ ծառայությունից-ծառայություն համարժեքության մոտեցումները՝ որպես առաջնային տարբերակ, այդ դեպքում օգտագործվում են այլընտրանքային գնահատման մեթոդներ: Իրավասու մարմինը կարող է մեթոդ սահմանել, ինչպես օրինակ՝ դրամական գնահատման մեթոդն է, որոշելու համար վնասի վերացման լրացուցիչ և փոխհատուցող միջոցների անհրաժեշտ մասշտաբները: Եթե կորած ռեսուրսների և (կամ) ծառայությունների գնահատումը գործնականում հնարավոր է, բայց հնարավոր չէ կատարել բնական ռեսուրսների և (կամ) ծառայությունների փոխարինման գնահատում ողջամիտ ժամկետներում և ողջամիտ ծախսերով, այդ դեպքում իրավասու մարմինը կարող է վնասի վերացման այնպիսի միջոցներ ընտրել, որոնց ծախսերը համարժեք են կորած բնական ռեսուրսների և (կամ) ծառայությունների գնահատված դրամական արժեքին:

Վնասի վերացման լրացուցիչ և փոխհատուցող միջոցները պետք է այնպես նախագծվեն, որ դրանց արդյունքում հնարավոր լինի լրացուցիչ բնական ռեսուրսներ ստանալ և (կամ) ծառայություններ, որոնք արտացոլում են վնասի փոխհատուցման միջոցների

Ժամանակային նախապատվությունները և ժամանակային գրաֆիկը: Օրինակ՝ ինչքան երկար է այն ժամանակահատվածը, որն անհրաժեշտ է՝ նախքան սկզբնական վիճակին հասնելը, այնքան մեծ է նախաձեռնվող վնասի վերացման փոխհատուցման միջոցների գումարը (եթե մնացած գործոնները նույնն են):

1.3. Վնասի վերացման տարբերակների ընտրությունը

1.3.1 Վնասի վերացման ողջամիտ միջոցները պետք է գնահատվեն հասանելի ամենալավ տեխնոլոգիաների օգտագործմամբ՝ հետևյալ չափորոշիչների հիման վրա՝

- յուրաքանչյուր տարբերակի ազդեցությունը հանրային առողջության և ապահովության համար. – տվյալ տարբերակն իրագործելու ծախսերը. – յուրաքանչյուր տարբերակի հաջողության հավանականությունը.
- ինչքանով տվյալ տարբերակը կկանխի հետագա վնասը և ինչքանով դրա իրականացման արդյունքում կխուսափեն կողմնակի ազդեցություններից.
- ինչքանով է յուրաքանչյուր տարբերակ նպաստում բնական ռեսուրսի և (կամ) ծառայության յուրաքանչյուր բաղադրիչին.
- ինչքանով է յուրաքանչյուր տարբերակը հաշվի առնում որոշակի տեղանքին հատուկ սոցիալական, տնտեսական և մշակութային առանձնահատկություններն ու այլ համապատասխան գործոններ.
- ինչքան ժամանակ կպահանջվի՝ արդյունավետորեն վերականգնելու համար շրջակա միջավայրին հասցված վնասը.
- ինչքանով է յուրաքանչյուր տարբերակ վերականգնում շրջակա միջավայրին հասցված վնասի տեղանքը.
- վնասված տեղանքի հետ աշխարհագրական կապը:

1.3.2 Վնասի վերացման սահմանված տարբեր տարբերակները գնահատելիս՝ կարելի է ընտրել վնասի վերացման առաջնային միջոցներ, որոնք, մինչև սկզբնական վիճակ, ամբողջովին չեն վերականգնում վնասված ջուրը կամ պաշտպանվող տեսակները կամ բնական միջավայրը կամ այն շատ դանդաղ են վերականգնում: Նման որոշում կարելի է ընդունել, եթե միայն այդ որոշման արդյունքում չվերականգնված բնական ռեսուրսները և (կամ) ծառայությունները առաջնային տեղանքում փոխհատուցվում են լրացուցիչ կամ

փոխհատուցվող գործողություններով՝ ապահովելու համար չվերականգնված բնական ռեսուրսների և (կամ) ծառայությունների նմանատիպ մակարդակ: Նման իրավիճակ կարող է առաջանալ, օրինակ, երբ համարժեք բնական ռեսուրսներ և (կամ) ծառայություններ կարելի է առավել ցածր արժեքով ստանալ մեկ այլ վայրում: Վնասի վերացման այս լրացուցիչ միջոցները սահմանվում են 1.2.2. բաժնում սահմանված կանոնների համաձայն:

1.3.3 Չնայած 1.3.2. բաժնում սահմանված կանոնների և 7(3) հոդվածի համաձայն, իրավասու մարմինն իրավունք ունի որոշում ընդունելու այն մասին, որ վնասի վերացման հետագա միջոցներ պետք է ձեռնարկվեն, եթե՝

վնասի վերացման արդեն ձեռնարկված միջոցներն ապահովում են, որ վերացվի ցանկացած էական ռիսկ, որին կարող են ենթարկվել մարդու առողջությունը, ջուրը կամ պաշտպանվող տեսակները և բնական միջավայրը. և

ինչև սկզբնական վիճակ կամ նման մակարդակ ձեռք բերելու նպատակով վնասի վերացման միջոցների արժեքը համամասնական չէ շրջակա միջավայրից ձեռք բերվող օգուտներին:

2. Հողին հասցված վնասի վերացումը

Անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվում՝ ապահովելու համար (որպես նվազագույն), որ համապատասխան աղտոտիչները վերացվեն, վերահսկվեն, զսպվեն կամ նվազեցվեն այնպես, որ աղտոտված հողն այլևս էական ռիսկ չներկայացնի մարդու առողջությանը հասցվող բացասական ազդեցությունների առումով՝ հաշվի առնելով տվյալ պահին այդ հողի օգտագործումը կամ վնասի պահին հաստատված հետագա օգտագործումը: Նման ռիսկերի առկայությունը գնահատվում է ռիսկի գնահատման ընթացակարգերով՝ հաշվի առնելով գրունտի բնույթը և գործառույթը, վնասակար նյութերի, պատրաստուկների, օրգանիզմների ու միկրո-օրգանիզմների տեսակը և խտությունը, դրանցից բխող ռիսկն ու դիսպերսիայի հավանականությունը: Կիրառությունը հաստատվում է հողի օգտագործման կանոնակարգերի կամ այլ գործող համապատասխան կանոնակարգերի հիման վրա (եթե նման կանոնակարգեր կան)՝ վնասը տեղի ունենալու պահին:

Եթե հողի օգտագործումը փոփոխության է ենթարկվում, ձեռնարկվում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու համար մարդու առողջությանը սպառնացող որևէ բացասական ազդեցություն:

Եթե հողի օգտագործմանը վերաբերող կանոնակարգերը կամ համապատասխան այլ կանոնակարգեր գոյություն չունեն, վնասը տեղի ունենալու համապատասխան վայրի բնույթը կանխորոշում է որոշակի տարածքում կիրառությունը՝ հաշվի առնելով ակնկալվող զարգացումները:

Հաշվի է առնվում բնական վերականգնման տարբերակը, այսինքն, երբ վերականգնման գործընթացում մարդու կողմից ոչ մի միջամտություն չի արվում :

3(1) ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Կայանքների գործարկումը, որոնք կարգավորվում են «Աղտոտման ինտեգրված կանխարգելման և վերահսկման մասին» Խորհրդի 1996 թվականի սեպտեմբերի 24-ի 96/61/ԵՀ կանոնակարգով: Սրա մեջ մտնում են այն բոլոր գործողությունները, որոնք նշված են 96/61/ԵՀ հրահանգի I հավելվածում՝ բացառությամբ այն կայանքների կամ կայանքների մասերի, որոնք օգտագործվում են հետազոտության, զարգացման և նոր արտադրատեսակներ ու պրոցեսներ փորձաստուգելու նպատակով:

2. Թափոնների կառավարման գործողություններ՝ ներառյալ հավաքումը, տեղափոխումը, վերականգնումը և թափոնները, ինչպես նաև վտանգավոր թափոնները տնօրինելը: Նման գործողությունների մեջ մտնում են այդ գործողությունների կառավարումը և թափոնների տեղանքների հետագա խնամքը, որոնց համար պահանջվում է «Թափոնների մասին» Խորհրդի 1975 թվականի հուլիսի 15-ի 75/442/ԵՏՀ հրահանգի (9) և «Վտանգավոր թափոնների մասին» Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 12-ի 91/689/ԵՏՀ հրահանգի (10) համաձայն թույլտվություն կամ գրանցում:

Այդ գործողությունները, մասնավորապես, ներառում են աղբանոցների կառավարումը՝ «Աղբանոցների թափոնների մասին» Խորհրդի 1999 թվականի ապրիլի 26-ի 1999/31/ԵՀ հրահանգի համաձայն (11) և այրման կետերի գործարկումը՝ «Թափոնների այրման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2000 թվականի դեկտեմբերի 4-ի 2000/76/ԵՀ հրահանգի համաձայն (12):

Սույն Հրահանգի նպատակներով անդամ պետությունները կարող են որոշում ընդունել, որ նման գործողությունների մեջ չի մտնում քաղաքային ջրային թափոնների մշակման կետերից կոյուղու կեղտի տարածումը, որը գյուղատնտեսական նպատակներով մշակվել է հաստատված ստանդարտի համաձայն :

3. Լճերի և գետերի ներքին ջրերում թափված բոլոր թափոնները, որոնք «Համայնքի ջրային միջավայր թափված որոշ վտանգավոր նյութերից առաջացած աղտոտման մասին» Խորհրդի 1976 թվականի մայիսի 4-ի 76/464/ԵՏՀ հրահանգի (13) համաձայն, պետք է արտոնագիր ստանան:

4. Ստորգետնյա ջրերում թափված նյութերի բոլոր թափոնները, որոնք «Որոշ վտանգավոր նյութերի կողմից առաջացած աղտոտման դեմ ստորգետնյա ջրերի պաշտպանության մասին» Խորհրդի 1979 թվականի դեկտեմբերի 17-ի 80/68/ԵՏՀ հրահանգի (14) համաձայն, նախնական արտոնագրում են պահանջում :

5. Աղտոտիչների արտանետումը կամ ներմղումը վերգետնյա կամ ստորգետնյա ջրերում, որը, 2000/60/ԵՀ հրահանգի համաձայն, թույլտվություն, արտոնագիր կամ գրանցում է պահանջում:

6. Ջրօգտագործումը և ջրերի ամբարումը, որոնք, 2000/60/ԵՀ հրահանգի համաձայն, ենթակա են նախնական արտոնագրման:

7. Վտանգավոր նյութերի արտադրությունը, կիրառությունը, պաշարումը, մշակումը, լցումը, շրջակա միջավայր բացթողումը և դեպի նշանակված վայր տեղափոխումը, ինչպես սահմանված է «Վտանգավոր նյութերի դասակարգմանը, փաթեթավորմանը և մակնշմանը վերաբերող՝ անդամ պետությունների օրենսդրական նորմերի, կանոնակարգերի և վարչական դրույթների մոտարկման մասին» Խորհրդի 1967 թվականի հունիսի 27-ի 67/548/ԵՏՀ հրահանգի (15) 2(2) հոդվածում:

Վտանգավոր պատրաստուկները, որոնք սահմանված են «Վտանգավոր պատրաստուկների դասակարգմանը, փաթեթավորմանն ու մակնշմանը վերաբերող՝ անդամ պետությունների իրավական նորմերի, կանոնակարգերի և վարչական ակտերի մոտարկման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1999 թվականի մայիսի 31-ի 1999/45/ԵՀ հրահանգի (16) 2(2) հոդվածով:

Բուսապաշտպան արտադրանքը, ինչպես սահմանված է «Բուսապաշտպան արտադրանքի շուկայահանման մասին» Խորհրդի 1991 թվականի հուլիսի 15-ի 91/414/ԵՏՀ հրահանգի 2(1) հոդվածով (17)

Բիոցիդային/կենսասպան արտադրանքը, ինչպես սահմանված է «Կենսասպան

արտադրանքի շուկայահանման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1998 թվականի փետրվարի 16-ի 98/8/ԵՀ հրահանգի (18) 2(1)(ա) հոդվածով:

8. Վտանգավոր ապրանքների կամ աղտոտող ապրանքների տեղափոխումը ավտոճանապարհով, երկաթուղով, ներքին ջրերով, ծովով կամ օդով, ինչպես սահմանված է «Ավտոճանապարհով վտանգավոր ապրանքների տեղափոխմանը վերաբերող՝ անդամ պետությունների իրավական նորմերի մոտարկման մասին» Խորհրդի 1994 թվականի նոյեմբերի 21-ի 94/55/ԵՀ հրահանգի (19) Ա հավելվածում կամ «Երկաթուղով վտանգավոր ապրանքների տեղափոխմանը վերաբերող՝ անդամ պետությունների իրավական նորմերի մոտարկման մասին» Խորհրդի 1996 թվականի հուլիսի 23-ի 96/49/ԵՀ հրահանգի (20) հավելվածում կամ «Վտանգավոր կամ աղտոտող ապրանքներ տեղափոխող՝ Համայնքում տեղակայված կամ Համայնքից հեռացող նավերի նկատմամբ նվազագույն պահանջների մասին» Խորհրդի 1993 թվականի սեպտեմբերի 13-ի 93/75/ԵՏՀ հրահանգում (21):
9. Կայանքների շահագործումը, որը ենթակա է «Արդյունաբերական գործարանների կողմից օդի աղտոտման դեմ պայքարի մասին» Խորհրդի 1984 թվականի հունիսի 28-ի 84/360/ԵՏՀ հրահանգի (22) համաձայն արտոնագրման՝ այդ հրահանգով կարգավորվող աղտոտող նյութերի՝ օդ արտանետման հետ կապված:
10. Գենետիկորեն փոփոխված միկրոօրգանիզմների՝ փակ միջավայրում օգտագործումը՝ ներառյալ տեղափոխումը, ինչպես սահմանված է «Գենետիկորեն փոփոխված միկրոօրգանիզմները փակ միջավայրում օգտագործելու մասին» Խորհրդի 1990 թվականի ապրիլի 23-ի 90/219/ԵՏՀ հրահանգով:
11. Գենետիկորեն փոփոխված օրգանիզմները միտումնավոր կերպով շրջակա միջավայր արտանետումը, դրանց տեղափոխումն ու շուկայահանումը, ինչպես սահմանված է Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001/18/ԵՀ հրահանգով (24):

12. Թափոնների միջսահմանային փոխադրում Եվրոպական միության տարածքում, դեպի Եվրոպական միություն և նրանից դուրս, որը պահանջում է արտոնագրում կամ արգելք՝ «Եվրոպական համայնքի տարածքում, դեպի Համայնք և դրանից դուրս թափոնների փոխադրման վերահսկողության և հսկողության մասին» Խորհրդի 1993 թվականի փետրվարի 1-ի թիվ 259/93 (ԵՏՀ) կանոնակարգի(25) իմաստով:

ՈՄ1

13. Արդյունահանման թափոնների կառավարումը՝ «Արդյունահանող արդյունաբերությունից թափոնների կառավարման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի մարտի 15-ի 2006/21/ԵՀ հրահանգի համաձայն (26):

ՈՄ2

14. Պահեստների շահագործումը՝ «Ածխաթթու գազի ստորգետնյա պահեստավորման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի ապրիլի 23-ի 2009/31/ԵՀ հրահանգի (27) համաձայն:

ՈԲ

4(2) ՀՈՂՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՏԻԱՆԵՐԸ

- ա) «Նավթից աղտոտման վնասի համար քաղաքացիական պարտավորության մասին» 1992 թվականի նոյեմբերի 27-ի միջազգային կոնվենցիա.
 - բ) «Նավթից աղտոտման վնասի դիմաց փոխհատուցման միջազգային հիմնադրամի ստեղծման մասին» 1992 թվականի նոյեմբերի 27-ի միջազգային կոնվենցիա.
 - գ) «Բունկերային նավթից աղտոտման վնասի համար քաղաքացիական պարտավորության մասին» 2001 թվականի մարտի 23-ի միջազգային կոնվենցիա.
 - դ) «Ծովով վտանգավոր և վնասակար նյութերի տեղափոխման հետ կախված վնասի դիմաց պարտավորության և փոխհատուցման մասին» 1996 թվականի մայիսի 3-ի միջազգային կոնվենցիա.
 - ե) «Ավտոճանապարհով, երկաթուղով, ներքին ծովագնացության նավերով վտանգավոր ապրանքների տեղափոխման ժամանակ հասցված վնասի դիմաց քաղաքացիական պարտավորության մասին» 1989 թվականի հոկտեմբերի 10-ի կոնվենցիա:
-

4(4) ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

- ա) «Ատոմային էներգիայի բնագավառում երրորդ կողմի պարտավորության մասին» 1960 թվականի հուլիսի 29-ի Փարիզի կոնվենցիա և 1963 թվականի հունվարի 31-ի Բրյուսելի լրացնող կոնվենցիա.
- բ) «Ատոմային վնասի դիմաց քաղաքացիական պարտավորության մասին» 1963 թվականի մայիսի 21-ի Վիեննայի կոնվենցիա.
- գ) «Ատոմային վնասի դիմաց լրացնող փոխհատուցման մասին» 1997 թվականի սեպտեմբերի 12-ի կոնվենցիա.
- դ) «Վիեննայի կոնվենցիայի և Փարիզի կոնվենցիայի կիրարկման մասին» 1988 թվականի սեպտեմբերի 21-ի համատեղ արձանագրություն.
- ե) «Ատոմային նյութերի ծովային տեղափոխման բնագավառում քաղաքացիական պարտավորության մասին» 1971 թվականի դեկտեմբերի 17-ի Բրյուսելի կոնվենցիա:

=====

18(1) ՀՈՂՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԸ

18(1) հոդվածում նշված հաշվետվությունները ներառում են շրջակա միջավայրին հասցվող վնասի դեպքերի ցանկը և, սույն Հրահանգի համաձայն, պարտավորությունների ցանկը՝ յուրաքանչյուր դեպքի համար տրամադրելով հետևյալ տեղեկությունները և տվյալները՝

1. շրջակա միջավայրին հասցված վնասի տեսակը, դեպքի և (կամ) հայտնաբերման ամսաթիվն ու այն ամսաթիվը, երբ վարույթ է նախաձեռնվել՝ սույն Հրահանգի համաձայն.
2. պատասխանատու իրավաբանական անձի (անձանց) գործունեության դասակարգման ծածկագիրը (28).
3. արդյոք պատասխանատու կողմերը կամ իրավասու մարմինները դիմել են դատական վերանայման վարույթներին: (Հայցվորը և վարույթների արդյունքը նշվում են).
4. վնասի վերացման գործընթացի արդյունքը.
5. վարույթների փակման ամսաթիվը:

Անդամ պետություններն իրենց հաշվետվությունների մեջ կարող են ներառել այլ տեղեկություններ և տվյալներ, որոնք, իրենց կարծիքով, օգտակար կարող են լինել սույն Հրահանգի գործարկման պատշաճ գնահատման համար, օրինակ՝

1. վնասի վերացման և կանխարգելման միջոցների համար կատարված ծախսերը, ինչպես սահմանված է սույն Հրահանգում՝
 - որոնք վճարված են ուղղակիորեն պատասխանատու կողմերի կողմից, երբ այդ տեղեկությունը հասանելի է դառնում նրանց.
 - փաստից հետո փոխհատուցված ծախսերը պատասխանատու կողմերի կողմից.
 - պատասխանատու կողմերի կողմից չփոխհատուցված ծախսերը: (Չփոխհատուցելու փաստը պետք է հիմնավորվի).
2. սույն Հրահանգի համաձայն՝ խթանմանն ուղղված գործողությունները և կիրառված ֆինանսական ապահովության գործիքների իրականացումը.
3. լրացուցիչ վարչական ծախսերի գնահատումը, որոնք կատարվել են տարեկան կտրվածքով պետական վարչությունների կողմից, երբ դրանք կազմում և աշխատեցնում են վարչական միավորներ, որոնք անհրաժեշտ են՝ սույն Հրահանգը կիրարկելու համար:

(1) ՊՏ C 151 E, 25.06.2002թ., էջ 132:

(2) ՊՏ C 241, 07.10.2002թ., էջ 162:

(3) Եվրոպական պառլամենտի 2003 թվականի մայիսի 14-ի եզրակացություն (դեռ չի հրապարակվել Պաշտոնական տեղեկագրում), Խորհրդի 2003 թվականի սեպտեմբերի 18-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 277 E, 18.11.2003թ., էջ 10) և Եվրոպական պառլամենտի 2003 թվականի դեկտեմբերի 17-ի դիրքորոշում (դեռ չի հրապարակվել Պաշտոնական տեղեկագրում): Եվրոպական պառլամենտի 2004 թվականի մարտի 31-ի օրենսդրական որոշում և Խորհրդի 2004 թվականի մարտի 30-ի որոշում:

(4) ՊՏ L 103, 25.04.1979թ., էջ 1: Վերջին անգամ թիվ 807/2003/ԵՀ կանոնակարգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 122, 16.05.2003թ., էջ 36):

(5) ՊՏ L 206, 22.07.1992թ., էջ 7: Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 1882/2003 (ԵՀ) կանոնակարգով փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 284, 31.10.2003թ., էջ 1):

(6) ՊՏ L 327, 22.12.2000թ., էջ 1: Թիվ 2455/2001/ԵՀ որոշմամբ վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 331, 15.12.2001թ., էջ 1):

(7) ՊՏ L 12, 16.01.2001թ., էջ 1: Թիվ 1496/2002 (ԵՀ) կանոնակարգով (ՊՏ, L 225, 22.08.2002թ., էջ 13) փոփոխված կանոնակարգ:

(8) ՊՏ L 257, 10.10.1996թ., էջ 26: Վերջին անգամ թիվ 1882/2003 (ԵՀ) կանոնակարգով փոփոխված հրահանգ:

(9) ՊՏ L 194, 25.07.1975թ., էջ 39: Վերջին անգամ թիվ 1882/2003 (ԵՀ) կանոնակարգով փոփոխված հրահանգ:

(10) ՊՏ L 377, 31.12.1991թ., էջ 20: 94/31/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 168, 02.07.1994թ., էջ 28):

(11) ՊՏ L 182, 16.07.1999թ., էջ 1: Վերջին անգամ թիվ 1882/2003 (ԵՀ) կանոնակարգով փոփոխված հրահանգ:

(12) ՊՏ L 332, 28.12.2000թ., էջ 91:

(13) ՊՏ թիվ L 129, 18.05.1976թ., էջ 23: Վերջին անգամ թիվ 2000/60/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ:

(14) ՊՏ L 20, 26.01.1980թ., էջ 43: 91/692/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 377, 31.12.1991թ., էջ 48):

(15) ՊՏ L 196, 16.08.1967թ., էջ 1: Վերջին անգամ թիվ 807/2003 (ԵՀ) կանոնակարգով փոփոխված հրահանգ:

(16) ՊՏ L 200, 30.07.1999թ., էջ 1: Վերջին անգամ թիվ 1882/2003 (ԵՀ) կանոնակարգով փոփոխված հրահանգ:

(17) ՊՏ L 230, 19.08.1991թ., էջ 1: Վերջին անգամ թիվ 806/2003 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված հրահանգ (ՊՏ L 122, 16.05.2003թ., էջ 1):

(18) ՊՏ L 123, 24.04.1998թ., էջ 1: Վերջին անգամ թիվ 1882/2003 (ԵՀ) կանոնակարգով փոփոխված հրահանգ:

(19) ՊՏ L 319, 12.12.1994թ., էջ 7: 2003/28/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 90, 08.04.2003թ., էջ 45):

(20) ՊՏ L 235, 17.09.1996թ., էջ 25: Հանձնաժողովի 2003/29/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 90, 08.04.2003թ., էջ 47):

(21) ՊՏ L 247, 05.10.1993թ., էջ 19: Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002/84/ԵՀ հրահանգով փոփոխված Հրահանգ (ՊՏ L 324, 29.11.2002թ., էջ 53):

(22) ՊՏ L 188, 16.07.1984թ., էջ 20: 91/692/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 377, 31.12.1991թ., էջ 48):

(23) ՊՏ L 117, 08.05.1990թ., էջ 1: Վերջին անգամ թիվ 1882/2003 (ԵՀ) կանոնակարգով փոփոխված հրահանգ:

(24) ՊՏ L 106, 17.04.2001թ., էջ 1: Վերջին անգամ թիվ 1830/2003 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված հրահանգ (ՊՏ L 268, 18.10.2003թ., էջ 24):

(25) ՊՏ L 30, 06.02.1993թ., էջ 1: Վերջին անգամ Հանձնաժողովի թիվ 2557/2001 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված կանոնակարգ (ՊՏ L 349, 31.12.2001թ., էջ 1):

(26) ՊՏ L 102, 11.04.2006թ., էջ 15:

(27) ՊՏ L 140, 05.06.2009թ., էջ 114:

(28) Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի ծածկագիրը կարող է օգտագործվել («Եվրոպական համայնքում տնտեսական գործունեության վիճակագրական դասակարգման մասին» Խորհրդի 1990 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 3037/90 կանոնակարգ (ԵՏՀ) (ՊՏ L 293, 24.10.1990թ., էջ 1):